ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/117

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ քննչական կոմիտե

Բողոք բերող՝ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ

Համանման բողոք բերող՝ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 23.12.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

Բողոքներ քննող անձին «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 23.12.2021թ.-ին:

24.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/117 համարի ծածկագիրը:

30.12.2021թ.-ին, 12.01.2022թ.-ին և 24.12.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.12.2022թ.-ին:

2. <u>«Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ն 23.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար՝ ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՖԼԵՇ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ–ն:

Մասնավորապես, «ՖԼԵՇ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ–ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է).

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /դրամներով և թվերով/	ԱԱՀ** /դրամներով և թվերով/	Ընդհանուր գինը /դրամներով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	19000000 Տասնինը միլիոն	3800000 Երեք միլիոն ութ հարյուր	22800000 Քսաներկու միլիոն ութ հարյուր

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «ՖԼԵՇ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկացված հայտով գնային առաջարկի՝ Հավելված 2-ի մեջ առկա է անհամապատաս-խանություն. Մասնակցի կողմից ներկայացված թվերով հաշվարկը չի համապատասխանում տառերով գրվածին: Տառերով ներկայացված հաշվարկի մեջ ավելացված արժեքի հաշվարկը /ԱԱՀ/ սխալ է հաշվարկված:

Նույն արձանագրության 5-րդ կետով հաձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել «ՖԼԵՇ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ:

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.–ի թիվ 526–Ն որոշմամբ (10.10.2019թ.–ի թիվ 1422–Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Տվյալ պարագայում «ՖԼԵԾ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ–ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը:

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	19000000 Տասնինը միլիոն	3800000 Երեք միլիոն ութ հարյուր	22800000 Քսաներկու միլիոն ութ հարյուր

Ուսումնասիրելով «ՖԼԵԾ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ–ի կողմից ներկայացրած գնային առաջարկը, պարզվում է, որ գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով նշված գումարների հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին, այսինքն՝ տասնինը միլիոն + երեք միլիոն ութ հարյուր = քսաներկու միլիոն ութ հարյուր ՀՀ դրամի:

Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «ՖԼԵԾ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ–ի կողմից ներկայացրած գնային առաջարկը այն հիմնավորմամբ, որ մասնակցի կողմից ներկայացված թվերով հաշվարկը չի համապատասխանում տառերով գրվածին:

Սակայն Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:

Իսկ ինչպես երևում է վերոհիշյալ վերլուծությունից, «ՖԼԵԾ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ–ի կողմից ներկայացրած գնային առաջարկում առկա է եղել 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ)

պարբերությամբ նախատեսված իրավիճակը, ինչը նույն կետի համաձայն՝ հայտը մերժելու հիմք չի կարող հանդիսանալ:

Գտնում ենք, որ նման պարագայում «ՖԼԵՇ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ–ի կողմից ներկայացրած հայտը ենթակա չէր մերժման՝ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերությամբ նախատեսված բացառության ուժով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

Ի լրումն ներկայացված բողոքի, «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ն 14.04.2022թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «ՖԼԵՇ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ–ի կողմից 23.12.2021թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/117 բողոքը:

Վերոհիշյալ բողոքով վիճարկել ենք ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար՝ ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարար-ված «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները:

Սույնով ներկայացվում է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/117 բողոքի պահանջի հստակեցում.

Ինչպես արդեն նշել ենք ներկայացված բողոքով, «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «ՖԼԵՇ-

ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկացված հայտով գնային առաջարկի՝ Հավելված 2-ի մեջ առկա է անհամապատաս-խանություն. Մասնակցի կողմից ներկայացված թվերով հաշվարկը չի համապատասխանում տառերով գրվածին: Տառերով ներկայացված հաշվարկի մեջ ավելացված արժեքի հաշվարկը /ԱԱՀ/ սխալ է հաշվարկված:

Այնուհետև նույն արձանագրության 5-րդ կետով հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել «ՖԼԵՇ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ի հայտը:

Գտնում ենք, որ 21.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ «Մասնակցի կողմից ներկայացված թվերով հաշվարկը չի համապատասխանում տառերով գրվածին» հատվածով, չէր կարող հիմք հանդիսանալ մասնակցի հայտը մերժելու համար, քանի որ վերոհիշյալ ձևակերպումը հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ.–ի թիվ 526–Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերությանը:

Մասնավորապես, Կարգի) 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ , մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

Ուսումնասիրելով «ՖԼԵՇ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ–ի կողմից ներկայացրած գնային առաջարկը, պարզվում է, որ գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով նշված գումարների հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին, այսինքն՝ տասնինը միլիոն + երեք միլիոն ութ հարյուր = քսաներկու միլիոն ութ հարյուր ՀՀ դրամի:

Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրության 2.1 կետով որպես հայտը մերժելու հիմքերից մեկը արձանագրել է, որ մասնակցի կողմից ներկայացված թվերով հաշվարկը չի համապատասխանում տառերով գրվածին:

Սակայն Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ

մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:

Իսկ ինչպես երևում է վերոհիշյալ վերլուծությունից, «ՖԼԵՇ-ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ–ի կողմից ներկայացրած գնային առաջարկում առկա է եղել 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերությամբ նախատեսված իրավիճակը, ինչը նույն կետի համաձայն՝ հայտը մերժելու հիմք չի կարող հանդիսանալ:

Գտնում ենք, որ այս իմաստով պետք է նաև դադարեցվի ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետը՝ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերությանը հակասելու հիմքով:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.1. կետով կայացրած որոշումները:
2. Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

3. <u>ՀՀ քննչական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.12.2021թ.-ին /ԲՔԱ-ԼՕ/2/21422-2021 գրությամբ դիմել է ՀՀ քննչական կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի 23.12.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 28.12.2022թ.-ին ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«ՀՀ քննչական կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է 10.12.2021 թվականին:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ,

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

«ՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովի գործողությունները ուղղված են եղել մասնակիցների միջև ոչ խտրական միջավայրի ապահովմանը: Այսպես՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ/

պարբերության համաձայն մասնակցի հայտը ենթակա չէ մերժման եթե գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին: Հուտ թվաբանական գործողության տեսանկյունից կարծես թե բողոքաբերի կողմից ներկայացված հիմնավորումը բավարարում է Կարգի 32-րդ Կետի 2-րդ ենթակետի բ/ պարբերությանը, սակայն հավելված 2-ի 4-րդ սյունակում տառերով ներկայացված թիվը չի կազմում հավելված 2-ի 3-րդ սյունակում նշված մեծության ՀՀ «Հարկային օրենսգրքի» 63-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ավելացված արժեքի հարկի /այսուհետ՝ ԱԱՀ/ դրույքաչափին /20տոկոս/: Բողոքաբերի կողմից ներկայացված գնային առաջարկի մեջ տառերով գրված ավելացված արժեքի հարկի գումարը կազմում է 3000800 /երեք միլիոն ութ հարյուր դրամ/, մինչդեռ ավելացված արժեքի հարկի գումարը տառերով պետք է կազմի 3800000 /երեք միլիոն ութ հարյուր հազար դրամ/: Ըստ ներկայացված գնային առաջարկի ՀՀ պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարը կազմում է 3000800 /երեք միյիոն ութ հարյուր դրամ/, մինչդեռ տվյայ գնային առաջարկից ՀՀ պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարը կազմում է 3800000 /երեք միլիոն ութ հարյուր հագար դրամ/:

Ներկայացված գնային առաջարկի 3-րդ և 4-րդ սյունակների թվերով գրվածի հանրագումարը չի կազմում 5-րդ սյունակի տառերով գրված մեծությանը:

Հետևապես բողոքաբերի ներկայացրած գնային առաջարկը չի բավարարում կարգի 32-րդ կետի 2-րդ մասի բ/ ենթակետին և ԱԱՀ-ի հաշվարկի տրամաբանությանը ուստի և հակասում է սույն ընթացակարգի հրավերի 40-րդ կետի 4-րդ ենթակետին:

Բողոքաբերի չհիմնավորված և բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակության ապացույցների բացակայությամբ պայմանավորված, պայմանագրի կատարման ժամկետների առումով կարող են խախտվել նաև մյուս մասնակիցների իրավունքները:

Հիմք ընդունելով Օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը՝ խնդրում ենք Ընթացակարգը հանել կասեցումից և թույլ տալ շարունակել գնման գործընթացը հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն Ընթացակարգով ձեռք բերվող ծառայությունը Պատվիրատուի բնականոն գործունեության և ֆունկցիոնալ առումներով հանդիսանում է կարևոր գնում:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/117 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.12.2021թ.-ին:

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ն:

iii. «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	19000000 Տասնինը միլիոն	3800000 Երեք միլիոն ութ հարյուր	22800000 Քսաներկու միլիոն ութ հարյուր

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով գնային առաջարկում՝ Հավելված 2-ում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված թվորով հաշվարկը չի համապատասխանում տառերով գրվածին, ինչպես նաև տառերով ներկայացված հաշվարկի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկը սպալ է հաշվարկված:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշել է «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից 23.12.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման,

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը

հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու

անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17: 00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	19000000 Տասնինը միլիոն	3800000 Երեք միլիոն ութ հարյուր	22800000 Քսաներկու միլիոն ութ հարյուր

Հանձնաժողովի 21.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով գնային առաջարկում՝ Հավելված 2-ում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված թվորով հաշվարկը չի համապատասխանում տառերով գրվածին, ինչպես

նաև տառերով ներկայացված հաշվարկի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկը սպալ է հաշվարկված, ինչով պայմանավորված որոշում է կայացվել «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «Արժեք» սյունակում նշված գումարի նկատմամբ ավելացված արժեքի հարկի գումարը պակաս է հաշվարկվել 799 200 ՀՀ դրամով: Մասնավորապես՝ Մասնակցի կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պետք է կազմեր 3 800 000 ՀՀ դրամ՝ գնային առաջարկում **տառերով** նշված երեք միլիոն ութ հարյուր / 3 000 800/ ՀՀ դրամի փոխարեն /19 000 000 (արժեք) * 20%/՝ որպիսի պայմաններում պետք է փոխվեր նաև Մասնակցի ներկայացրած ընդհանուր գինը, այն կկազմեր 22 000 800 ՀՀ դրամ (799 200 ՀՀ դրամով ավելի պակաս ի համեմատ թվերով նշված գումարից), ըստ այդմ՝ «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում նշված գումարների հանրագումարի և «Ընդհանուր գինը» սյունակում տառերով լրացված արժեքի գումարի միջև առկա է 799 200 ՀՀ դրամ գումարի չափով տարբերություն՝ հիմք ընդունելով Ընկերության կողմից տառերով նշված հանրագումարը, քանի որ Օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվել է, որ հայտում տառերով և թվերով գրված գումարների միջև անհամապատասխանության դեպքում հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

Նույն օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):

Բողոքներ քննող անձը, գործում առկա փաստական հանգամանքերը վերլուծության ենթարկելով վերը բերված իրավական նորմերի և դրանց հիման վրա արված մեկնաբանությունների համատեքստում, հանգում է այն հետևության, որ «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում վերոնշյալ

իրավական նորմերի պահանջներին, քանի որ մասնակցի կողմից տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը սխալ է հաշվարկված՝ հետևաբար պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող ընդհանուր գինը նույնպես սխալ է հաշվարկվել:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ, տվյալ դեպքում, «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «ԱԱՀ» սյունակում առկա տառերով գումարների չափի սխալ նշելու հանգամանքը պետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆլեշ-մոտորս» ՍՊԸ-ի կողմից 23.12.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/117 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**